

խատանքը, և թող օգնէ նա Մեզ՝ հայրենիքի բոլոր հաւատարիմ՝ զաւակների սերտ միութեամբ կատարելու Մեր խորհուրդները՝ պետական կարգը կատարելագործելու, սահմանելով տեղական կեանքի հաստատուն կազմ, իբրև գլխաւոր պայման Մեր պետութիւնը ծաղկեցնելու՝ հաւատոյ, օրէնքի և իշխանութեան ամուր հիմքերի վերայ:

Տրուած է Ս. Պետերբուրգում, փետրուարի 26-րդ օրը, Քրիստոսի ծննդեան հազար ինն հարիւր երեք թուին, Մեր թագաւորութեան իններորդ տարում:

Իսկականի վրայ նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրուած է՝ ՆԻԿՈԼԱՅ:



Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

ՄԿՐՏԻՉ ԺԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆՆԵՐԻ ԿԱՄՕԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱՔՈՒՂԻԿՈՍ ԱՄԷՆԱՅԻՆ ՀԱՅՈԳ ԾԱՅՐԱԳՈՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԽ ՀԱՄԱԳԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՔՈՐՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՖԵՂԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՄՐԲՈՅ ԿԱՔՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Գերաշնորհ Տ. Գէորգ Եպիսկոպոսի, Առաջնորդի վիճակին Եւրօպիոյ, հոգևոր որդւոյ Մերոյ և հարազատի Մայր Աթոռոյս, Հայրապետական ողջունիւ յայտ առնելք:

Տ. Թագէոս Քահանայ Փափազեան, բնիկ Ղընճըլարցի, նախկին պաշտօնեայ ս. եկեղեցւոյն Աղէքսանդրիոյ, զորոյ զգայթակղեցուցիչ վարուց և զանուղղայ բնթացից ի վաղ ժամանակաց հասեալ էին Մեզ տեղեկութիւնք՝ տակաւին ի 1884—85 ամաց հետէ, մինչդեռ գտանէր ի Տարտանել և

ի սկզբան իննսնական թուականաց յԱղէքսանդրիայ, ցարդ-
թափառի ի զանազան քաղաքս Եւրոպիոյ անպաշտօն, և ի վեր-
ջին աւուրս՝ ըստ հասեալ Մեղ տեղեկութեանց, գործակից
միջնորդ հանդիսացեալ ֆրանսուհւոյ ումեմն կոմսուհի Քո-
լօննա անուն, յղեալ է զորդին իւր ի Ռուսմանիա և ի Պօլ-
կարիա և բերեալ անտի զերկոտասան հայ մանկունս և
աղջկունս ի վեցամեանից մինչ ցերկոտասանամեայս և յանձ-
նեալ ֆրանսուհւոյն, իբրև բարերարի հայ որբոց և որ-
բուհեաց և ունողի հոյակապ շինութեան միոյ ի մերձա-
կայս Փարիզու. որոց նպատակն ոչ այլ ինչ եղեալ է, եթէ
ոչ դարձեալ օգուտ և շահ անձանց և ապրուստ ինքեանց՝
շահագործութեամբ անմեղ որբոցն թշուառ հայրենեաց Մե-
րոց։ Առ այս յայտնեն Մեղ պաշտօնական տեղեկութիւնք,
եթէ «հայերու մուտքն յիւր շահաստան չընդունուիր,
«հայ վերատեսչութեան մը կազմութեան չըյօժարիր.
«ֆրանսուհի վարժուհին տղայքը կը ծեծէ հայերէն խօ-
«սելուն համար, հայ լեզուով ազօթելուն խիստ ար-
«գելքներ կը դրուին, հովուին այցելութեան մը տուած
«պահուն բոլոր տղայքն և աղջկունք թախանձագին կա-
«ղաչեն ազատել զիրենք անկէ։ Ներկանին աղեխարշ է և
«ապագանին ի կորուստ», և ինչ նոյնպէս և յամին 1895
Ամենապատիւ եղբայրն Մեր Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս
Իզմիրլեան, յաւուրս պատրիարքութեան իւրոյ, դրութեամբ
յԹ-ն նոյեմբերի, համարաւ 218, դրէ վասն քահանային
այնորիկ ըստ հետեւելումն. «Ձե ևս հասեալ էր առ իս
տեղեկութիւն ինչ զստգտանելի վարուց քահանային
(Տ. Թադէոսի Փափագեան), տեսի ի մայրաքաղաքիս
ղլուսանկար կենդանագիր նորա զայս օրինակ. քահանայն
բազմեալ յաթոռ, փոքու շղթայիւ իւրիւ կախեալ է զլան-
ջացն զմի յարժաթեայ կողից Աւետարանի և խաչ ի ձե-
ռին կալեալ առ երի, և դեռահաս պատանեակ ոմն յոտըն-
կայս առնթեր աթոռոյն, անշնորհ իմն եղանակաւ։ Յետ
միամսեայ ժամանակի իրազեկ եղէ, եթէ Թադ. Խորհուրդն
մտադիր է յուղի արկանել զքահանայն վասն անվայել
վարմանցն, որպիսի են արբեցութիւն, անլուր հայհոյու-

Թիւնք, խռովարարութիւն և ըմբոստութիւն: Գրեցի առ Առաջնորդն յորդորել զքահանայն առ ի տալ վախճան անվայել ընթացիցն, սակայն քահանայն չլուելոյն առնելով զամենայն խրատ և յորդոր՝ յարատեւէ ի նոյն անհաճոյ վարս և ի բարս, և ինչ Բաց ի վերոգրելոցս լսեմք, եթէ քահանայն յաճախ դիմէ ի դրունս օտարազգեաց, ասելով զանձնէ լինել ոք յարկածելոցն Տաճկահայաստանի և խաբէութեամբ մուրայ դրամս. նաև ի դիպել հարկին առ օտարազգիս ցուցանէ զինքն իբրև Լատին ոք և Լուտերական, խօսելով բանս արհամարհականս զսուրբ եկեղեցւոյն Մերոյ, որպէս թէ չիցէ ինքն պաշտօնեայ նոյն եկեղեցւոյ: Եւ թէպէտ դժուարին է Մեզ պատժել զոք խստիւ, որպէս և ի բազում դէպս ներող և անյիշաչար գտեալ եմք հանդէպ անցանողացն զսահման իւրեանց և զչափ, սակայն վասն անուղղայից և ըմբոստացելոց ընդդէմ կարգաց եկեղեցւոյ Մերոյ՝ Մեր չկարեմք երբէք հանդուրժել և տալ ներողութիւն, զի չարիքն առաւել չափով ընդարձակեսցին. ուստի և ի նկատ առեալ զարմատացեալ չարիս յանձին Թագէոս քահանայի Փափազեան, զանուղղայ ընթացս նորին, զնորահնար չարիս և զխաբէութիւն և զգործակցութիւնն ի դործ հաւաքման որբոցն յանուն որբանոցին Քօլօննա տիկնոջ Ֆրանսուզոյ, յորմէ և զարդիս ինքն ևս մերժեալ կայ, յետ արկանելոյ զերկոտասան անմեղ որբս ընդ իրաւասութեամբ նորա, Մեր Հայրապետական Կոնդակաւս այսու լուծեալ համարեմք զԹագէոս Փափազեան Ղընճըլարցին ի կարգէ և ի կոչմանէ քահանայութեան Հայաստանեայցս Առաքելական ս. եկեղեցւոյ, զրկեալ համարելով զնա ի փիլոնէ, ի քահանայական լանջախաչէ և ի մասնակցութենէ կատարման խորհրդոց Մերս ս. եկեղեցւոյ, արտօնելոց քահանայից Մերոց:

Արդ, հրաման Մեր է առ Գերաշնորհութիւն Ձեր՝ յետս պահանջել ի նմանէ զՀայրապետական Կոնդակն հանդերձ լանջախաչիւ և ծանուցանել զայսմանէ համայն Հայ ժողովրդեան Եւրոպիոյ, որպէս և Մեր տուաք գիտել Ամեն. Պատրիարքին Կ. Պօլսոյ, և հրամայեցաք հրատա-

բակել զայս Կոնդակ Մեր յէջս «Արարատ» ամսագրի Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի:

Ի վերայ իսկականին ստորագրեալ է

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Ամենայն Հայոց

յՑ-ն մարտի 1903 ամի

և ըստ Տոմարիս Հայոց ՌԵՄԲ,

ի Հայրապետութեան Մերում Ժ. ամի

յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի,

ի Վաղարշապատ. Թ. 308:

ՔԱՂՈՒԱԾԻ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՋ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Ա.

Հայրապետական տնօրինութիւնք.

Կոնդակ յանուն Գեր. Տ. Յուսիկ Եպիսկոպոսի, որով Կարգեցաւ ի վանահայր վանուց ս. Հռիփսիմեայ. Թ. 284:

— Յանուն Աննոյի ս. Էջմիածնի, ընդ որում յետս դարձուցանելով զօրագիր նորին ի 21-էն փետրուարի՝ պատուիւրի կարգադրել ի կտտար ածել զկտակ բարեյիշատակ իշխան Ղազարամանայ Երկայնաբազուկ—Արղուլթեանց, ըստ մտաց ԺԱ. յօդուածոյ կապի նորին՝ վերաբերեալ Արղուլթեան օր. զըպրօցին Աղեքսանդրապոլու. Թ. 289:

— Յանուն Գեր. Փոխ. Թեմակալին Երեանայ, Տ. Ասէքիաս Արքեպիսկոպոսի, որով յայտնեցաւ նմա զկարգմանէ այրիացեալ Մկրտիչ քահ. ի Մնացականեան Ինաքլու գեղջ ի վանահայր վանուցն Ամաղու, որ ի Վայոց Ձոր. Թ. 282:

— Յանուն Հոգ. Կառավ. Հ. Կարուց, որով ներեալ լինին յանդանք դատապարտեալ Սարգիս քահ. ի Տ. Սարգսեան Նախճաւան գեղջ Կարուց և Թոյլատրի նմա քահանայադրածել. Թ. 200:

— Յանուեն միարանից Մ. Աթուոյ՝ Հոգեշնորհ Տ. Աշոտ, Տ. Մեսրոպ, Տ. Կարապետ, Տ. Յուսիկ, Տ. Մամբրէ վարդապետաց և դպիր Սպիրիդոնի, որով կարգեցան ի Մնայուն ուսումնական յանձնաժողով Մ. Աթուոյ ս. Էջմիածնի, ի վարել զգործս ուսումնական հաստատութեանց Մայր Աթուոյ՝ խմբագրութեան «Արարատ»-ի, տպարանի և մատենադարանի. թ. 307:

— Յանուեն Գեր. առաջնորդին Հայոց Եւրոպիոյ Տ. Գէորգեպիս-ի Իւթիւձեան, որով լուծեալ համարեցաւ Թադէոս քհնյն. Փափազեան Ղընճըլարցի ի կարգէ և ի կոչմանէ քահանայութեան, զրկելով յամենայն պատուոց և Հայրապետական պարգևաց, վաւն անուղղայ և գայթակղեցուցիչ ընթացիցն. թ. 308:

— Յանուեն Ամեն. Պատրիարքին Հայոց Թուրքիոյ Տ. Մաղաքիա Արքեպս.-ի, որով յայտնեցաւ նմա զկարգաւոյժ լինելոյն Թադէոս քահնյն Փափազեան. թ. 309:

— Յանուեն Սինոգի ս. Էջմիածնի, ընդ որում յետս դարձուցանելով զօրագիր նորին, որ վասն ձեռնադրութեան Յակովբայ Տ. Գէորգեան Դալուլար գեղջէ, պատուիրեցաւ կոչել զերկոսին ընծայեալս գեղջն և յետ քննութեան յատենի Սինոգի ընտրել զմին ի նոցունց. թ. 326:

— Յանուեն Սինոգի ս. Էջմիածնի, որով յայտնի կարգումն Գեր. Տ. Յուսիկ եպս.-ի ի վանահայր. ս. Հովսիսմեայ վանուց. թ. 371:

— Յանուեն Հոգաբարձութեան Ներսիսեան Հոգ. Դպրանոցի, որով պատուիրի տալ ուսուցչի դպրանոցին Նիկողայոսի Տ. Յարութիւնեանց թոշակ ի տարին 300 լուրի ցմահ նորա. թ. 397:

— Յանուեն նախագահի Հոգաբարձութեան Ներսիսեան Հոգ. Դպրանոցի Տփսեաց Գեր. Տ. Գէորգ Արքեպս.-ի, որով առաջադրեցաւ հրաւիրել ի ժողով զհոգաբարձուս Դպրանոցին և զպարոնայս Աղէքսանդր Յ. Մանթաշեանց, Կոստանդին Մ. Ալիսանեանց, Եղօր Տ. Դաւթեանց, Բժշկ. Աւետիք Մ. Բաբայան, Ճարտարապետ Արշակ Ա. Բաբեան, Ճարտարապետ

Գրիգոր Ե. Կիրակոսեան և իրաւաբան Պետրոս Յ. Քալան-
թարեան, և խորհրդակցութեամբ որոշել զտեղին նորոգ կա-
ռուցանելի շինուածոյ ներսիսեան Գպրանոցին. թ. 400:

Հայրապետական պարգեւք.

Ըստ միջնորդութեան Ամեն. Պատրիարքի Հայոց Թուր-
քիոյ Տ. Մաղաքիայ Արքեպիսկոպոսի շնորհեցան վարդապե-
տական լանջախաչք Տ. Եղնիկ ծ. վարդ. ի Գալբազձեան, Ա-
ռաջնորդին Բաղիշոյ. Տ. Մկրտիչ ծ. վարդ. ի Աղաւնունուոյ,
Առաջն. Տեղ. Քէօթաշիոյ և Աֆիոն Գաբաշիսարի. Տ. Եղ-
նիկ վարդ. ի Պապայեան, Առաջնորդին Տրապիզոնի. Տ. Թա-
թուլ ծ. վարդ. ի Գուրեան, Տեղապաշի Պանդրմայի և
Պալլքէօէրի. Տ. Փառէն վարդ. ի Մելքոնեան, Առաջնորդին
Սղերդի. Տ. Սահակ ա. քահ. ի Տ. Սարգսեան Միջագեղջ Կ.
Պոլսոյ:

Ըստ միջնորդութեան Գերաշնորհ Տ. Գէորգ Արքեպս. ի,
Թեմակալ Առաջնորդի վիճակին վրաստանի և Իմէրեթի,
շնորհեցան Կոնդակք կամիլաւկայի Տ. Գրիգոր քահ. ի Խօջա-
էյնաթեան վանաց աւագ եկեղեցւոյ Տփլսեաց, քահանայա-
կան լանջախաչից՝ Տ. Գրիգոր քահ. ի Շահնազարեան ա. Աս-
տուածածին եկեղեցւոյ Կուկիոյ Տփլսեաց և Տ. Ստեփաննոս
քահ. ի Երամեանց Ծղնէթ գեղջ Տփլսեաց:

Ըստ միջնորդութեան Գեր. Փոխ. Թեմակալին Երեանայ
Տ. Սուքիաս Արքեպս. ի շնորհեցաւ Կոնդակ լանջախաչի Սա-
հակ քահ. ի Դարբինեան ա. Լուսաւորիչ եկեղեցւոյ Ալէք-
սանդրապոլի:

Ըստ միջնորդութեան նախնադամոյ վիճ. Կոնսխտ. Շա-
մախուոյ Հոգեւն. Տ. Եփրեմ վարդ. ի շնորհեցան Կոնդակք՝
կամիլաւկայի Տ. Գաբեղին քահ. ի Ղուկասեան ա. Լուսաւո-
րիչ եկեղեցւոյ Բաղու քաղաքի և լանջախաչի Տ. Սողոմոն
քահ. ի Մատրասայ գեղջ Շամախուոյ:

Հայրապետական օրհնութիւնք եւ շնորհակալիք.

Կոնդակ յանուն Բագուարնակ պ. Դաւիթ բէկի Աւան-
Իւզրաշեան, յաղագս նուիրաբերելոյ նորա Մատենադարանի
Մ. Աթոռոյ զգրադարան հանդ. Ա. Երիցեանի. թ. 285:

— Յանուն պ. Սերոփբէի Ք. Պատկանեան, վասն նուիրե-
լոյ նորա զգրադարան հանդ. հօրն իւրոյ պրոֆ. Քերոփբէի
Պատկանեան Մատենադարանի Մայր Աթոռոյ. թ. 393:



Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՅԱՂԹԱՆԱԿ ԽԱՉԻՆ

«Յնծացայ ես ի բանս քո, որպէս
այն, որ դառնէ աւար բազում»:

Դաւիթ սաղմոս

Ծափս հարէք, ով հեթանոսք, և ցընծացէք դուք առ Աստուած,
Օրհնեցէք, որ ել թեւօք Խաչին իւրոյ Ինքն ի բարձունս,
Առ զաւարն ի գերողէն՝ դարձոյց անդրէն ի հայրենին:
Վասն որոյ յաղթանակին հընչեմ՝ զփող մեծաբարբառ,
Նոր Յեսուն Փրկիչըն մեր արկ ի կործան զհին Երիքով
Ահարկու ձայնիւն իւր, որ ի Խաչին անդ արձակեաց:
Նոր Մովսէս հրաշարուեստ դաւազանաւըն խաչանիչ
Պատառեալ մահուն ըզծով՝ հորդեաց մարդկան նոր շաւիղ:
Սուգեցաւ հին Փարաւօն և դոռ իշխանն աշխարհակալ,
Եւ երանց նորագոյն մեզ ճանապարհ ազատութեան,
Որ ոչ ևս տանի դըժուար ընդ-ճանապատն Սինէական,
Ուր կարօտ հացի և ջրոյ կրէր տըրտընջող հին Իսրայէլ:
Հապա ուր, ի Սիօն վերին, յոր լիութիւն է հոգեպէս:
Անդանօր Ահարօնի քոյրն ըզթըմբուկն առեալ ի ձեռն,